ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
N ՆԱԿ-ԳՀԱՇՁԲ-25/25
2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՅԵՄԲԵՐԻ 4-Ի «ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ N ՆԱԿ-ԳՀԱՇՁԲ-25/25 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 30.01.2026թ

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս տնօրեն՝ Գ. Աբաջյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն՝ Մ. Կարապետյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), հիմք ընդունելով 2025 թվականի նոյեմբերի 4-ին կնքված N ՆԱԿ-ԳՀԱՇՁԲ-25/25 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին՝ Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով, մինչև սույն թվականի մարտի 3-ը:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:
2.2. Համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականություններն թողնվում են անփոփոխ:
2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմերին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ	«ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	Հասցե՝ ք. Երևան, Նոր Նորք վ/շ, Միկոյան փ., 15շ, 26 բն
«Կոնվերսբանկ» ՓԲԸ	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930059757870100	Հ/Հ՝ 250011452500100
ՀՎՀՀ՝ 02562459	ՀՎՀՀ՝ 01048173
Գլխավոր տնօրեն՝ Գ. Աբաջյան	Տնօրեն՝ Մ. Կարապետյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ